Մամուլի հաղորդագրություն
Հոկտեմբերի 27, 2023

HSBC-Ն 100,000 ԱՄՆ ԴՈԼԱՐ ԿՀԱՏԿԱՑՆԻ ՔՈԱՖ-ի H.O.P.E. (ՀՈՒՅՍ) ՆԱԽԱԳԾԻՆ՝ ՆՊԱՍՏԵԼՈՎ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ — «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (ՔՈԱՖ) հայտարարում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) կողմից 100,000 ԱՄՆ դոլարի ներդրման մասին՝ H.O.P.E (Հույս) ծրագրի նպատակային աջակցության համար: Շարունակվող հումանիտար ճգնաժամին զուգահեռ ստեղծված այս նախաձեռնությունը նպատակ ունի մարդասիրական օգնություն ցուցաբերել Արցախից բռնի տեղահանված անձանց՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով որակյալ կացարանների տրամադրմանը, կրթության հնարավորությունների ստեղծմանը, հոգեսոցիալական աջակցությանն ու հմտությունների զարգացմանը:

HSBC Հայաստանն արդեն մեկ տասնամյակից ավելի է, ինչ ՔՈԱՖ-ի վստահելի գործընկերն է: Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նպատակները համընկնում են «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի առաքելությանը, այն է՝ տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ՝ գյուղական համայնքներում կրթության որակը բարելավելու և մասնագիտական զարգացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով: 2012 թվականից ի վեր, Բանկն աջակցում է ՔՈԱՖ-ի տարբեր նախագծերին, այդ թվում՝ կրթաթոշակների և կարիերայի զարգացման ծրագրին:

H.O.P.E (Հույս) նախագծին աջակցելով, HSBC Հայաստանը ուղղակիորեն նպաստում է Արցախից բռնի տեղահանված անձանց կրթական և մասնագիտական ռեսուրսների հասանալեիության ապահովմանը, ինչպես նաև բնակարանների հրատապ խնդրի լուծմանը:

H.O.P.E. նախագիծը միտված է ճգնաժամային իրավիճակում համապարփակ աջակցություն տրամադրելուն և ընդգրկում է չորս առանցքային ուղղություն՝ բնակարանային կարիքներ (**H**ousing), կրթական հնարավորություններ (**O**pportunities in Education), հոգեսոցիալական աջակցություն (**P**sychological and Health Support) ու հմտությունների զարգացում (**E**mpowerment through Capacity Building):

Սերտորեն համագործակցելով ՀՀ կառավարության հետ՝ ՔՈԱՖ-ն առաջարկում է ինչպես ժամանակավոր, այնպես էլ մշտական բնակարանային լուծումներ Արցախից տեղահանված անձանց համար: Նախագծի հաջորդ՝ կրթական բաղադրիչի շրջանակում, ՔՈԱՖ-ը Լոռու ՍՄԱՐԹ կենտրոնի կրթական ծրագրերում ակտիվորեն ներգրավում է արցախահայ երեխաների: Բացի այդ, նախագիծը ներառում է կրթաթոշակի և կարիերայի զարգացման ծրագրեր, որոնք երիտասարդների համար հասանելի կդարձնեն բարձրագույն կրթությունն ու մասնագիտական հնարավորությունները:

H.O.P.E. ծրագրի կարևորագույն ուղղություններից է բռնի տեղահանված անձանց առողջության և բարեկեցության ամրապնդումը: ՔՈԱՖ-ը զգալիորեն ընդլայնում է իր մասնագետների թիմը Լոռու և Արմավիրի մարզերի Երեխայի և ընտանիքի կենտրոններում՝ Արցախից տեղահանված անձանց հոգեբանական, լոգոպեդական ու սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով: Նախագիծը երաշխավորում է, որ Լոռու Դսեղ գյուղի տարածաշրջանային առողջության կենտրոնում երեխաներն ու մեծահասակներն ունենան անվճար ատամնաբուժական խնամք և առաջնային խնամքի ծառայություններ: Զուգահեռաբար, ՔՈԱՖ-ը ձևավորում է մասնագետների շարժական թիմեր՝ նրանց աշխատանքն անհրաժեշտ վայրերում ապահովելու նպատակով: Թիմում ներառված են ՔՈԱՖ Ստեփանակերտի Երեխայի և ընտանիքի կենտրոնի մասնագետները:

Կարևորելով մասնագիտական զարգացումը՝ ՔՈԱՖ-ի հանձնառությունը ընդգրկում է նաև Լոռու և Արմավիրի մարզերում հաստատված արցախահայ մանկավարժների որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրեր: Այս ջանքերը կարևոր են ուսուցիչների և դասավանդողների համար աշխատատեղեր ստեղծելու տեսանկյունից:

«H.O.P.E. նախագիծն իրականացնելիս ՔՈԱՖ-ը հենվում է Հայաստանի գյուղական համայնքներում շուրջ քսանամյա փորձի և 2020 թվականի պատերազմի հետևանքները վերացնելու մեր ծավալուն ջանքերի վրա: Մենք այդ փորձն ուղղում ենք կրթության, առողջապահության, հոգեբանական ծառայությունների և տնտեսական զարգացման ոլորտներում՝ համապարփակ և կայուն կերպով բավարարելու տեղահանված անձանց բազմակողմանի կարիքները»,- ասում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

«Հումանիտար ճգնաժամի դեմ պայքարն ու Արցախից բռնի տեղահանված անձանց օգնություն ցուցաբերելը առանձնահատուկ նշանակություն ուներ մեզ համար: ՔՈԱՖ-ի հետ ջանքերը միավորելու մեր որոշումը պայմանավորված էր երկար տարիների համագործակցության արդյունքում ձևավորված փոխվստահությամբ, ինչպես նաև H.O.P.E. ծրագրի նպատակներով՝ տեղահանվածներին որակյալ կացարանների տրամադրում, կրթության հնարավորությունների ստեղծում, հոգեսոցիալական աջակցություն ու հմտությունների զարգացում: Ծրագիրը, համահունչ լինելով

համայնքների բարօրության ստեղծման մեր հանձնառությանը, կնպաստի մեր հայրենակիցների երկարաժամկետ բարեկեցությանն ու հայաստանյան կյանքում բարեհաջող ինտեգրմանը», - ասում է HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

HSBC-ի կողմից 100,000 ԱՄՆ դոլար ներդրումը ևս մեկ անգամ ընդգծում է առկա դժվարությունները համատեղ ջանքերով հաղթահարելու կարևորությունը: Ավելին իմանալու և H.O.P.E. նախագծին աջակցելու համար անցեք հղումով.. coaf.org/project-hope-for-artsakh-people/.

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի և կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը 2004թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ ավելի քան 82 համայնքներում՝ ներդնելով ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլար՝ 100,000-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

***HSBC* Խումբ**

HSBC Holdings plc-ն՝ *HSBC* Խմբի մայր ընկերությունն է, որի գլխամասը գտնվում է Լոնդոնում: Խումբը իր հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխարհի 62 երկրներում և տարածաշրջաններում: *HSBC*-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 3,021 միլիարդ ԱՄՆ դոլար:

***HSBC* Հայաստան**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2023 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 334 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՄԵԴԻԱ ԿՈՆՏԱԿՏ

Նանա Մարդոյան
ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org

HSBC

Բջջ.՝ +374 55 003 723

CHILDREN OF ARMENIA FUND